բակից սենեակների ձեւն ու հիմնապատերը: Ավսիդը բոլորակ է ներսից․ բոլորակ են նաեւ կողքի սենեակները արեւելեան կողմից, որ դրսից անկիւնաւոր են եւ միայն ավսիդի մօտ բոլորակնում են եւ խորշ կազմում: Պտղավանքը ավսիդի արտաքին մասով զանազանւում է իր նմաններից, օրինակ Արուճից (Պատկ․ 3), որին նման է նաեւ Հռիփսիմէն (Պատկ․ 4) այս կէտում: Սենեակները կամարակապ էին եւ սրանց վերայ կար կրկին սենեակ երկարութեամբ արեւմուտքից արեւելք ձգուած, բայց ոչ շատ բարձր․ տեղացիներից շատերը տեսել են այդ սենեակները չքանդուած վիճակում․ այս երեւոյթը արժանի է ուշադրութեան հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան համար: Միջանկեալ յայտնենք, որ այդպիսի կրկնայարկ սենեակներ կան Հռիփսիմէի տեղի աւելի հին տաճարի հարաւային կողմից՝ Ագինեաման գիւղում, Արագածի արեւմտեան լանջերին, Կամսարականների չէնք: Հռիփսիմէն չունի երկրորդ յարկի սենեակները:



Պատկ․ 3

Արեւմտեան պատը ուղիղանկիւն էր․ մընացած է հիւսիսային կողմի մի մասը, նաեւ լուսամուտը կիսով չափ․ նման (Պատկ․ 1) մի լուսամուտ էլ ձախից հարաւային կողմից պիտի լինէր, եւ այս բարձր պատի ճակատին երրորդը, ինչպէս հիւսիսային պատից մակաբերել կարող ենք: Ներքեւում արեւմըտեան դուռն էր: Այս մասում էլ համեմատելի Արուճի արեւմտեան պատի հետ (Պատկ․